ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010, ք.Երևան-10, Մ.Մկրտչյան 5.
Հեռ. 011-59-72-07. Ֆաքս 52-65-77
Էլ. փոստ: secretariat@mineconomy.am
Վեբ կայք: www.mineconomy.am

№604996

«15» 02 2024թ

«Տեխնոիժիներինգ» ՍՊԸ-ին
(հասցե՝ ՀՀ, ք. Երևան,
Եղբայրության 1-ին նրբ 14)
էլ. փոստ՝ technoengineeringllc@gmail.com

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

(ՀՀ-ԷՆ-ԳՀԾՁԲ-23-24/10-2 ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծելու մասին)

ՀՀ էկոնոմիկայի նախարարության և «Տեխնոիժիներինգ» ՍՊ ընկերության միջև 29.12.2023 թվականին կնքվել է «ՀՀ էկոնոմիկայի նախարարության կարիքների համար գրասենյակային հաշվողական սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների» թիվ ՀՀ-ԷՆ-ԳՀԾՁԲ-23-24/10-2 ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

Պետական վերահսկողության ծառայության կողմից ներկայացված Ե/81-24 գրությամբ պարզ է դարձել, որ **«Տեխնոիժիներինգ» ՍՊ** ընկերության և **«Մագիստրալ նախագիծ» ՍՊ** ընկերության միջև առկա է փոխկապակցվածություն:(գրությունը կցվում է)

Համաձայն իրավաբանական անձանց պետական ռեգիստրի պետական միասնական գրանցամատյանի ընկերության 100% բաժնեմասի սեփականատեր է հանդիսանում Անժելիկա Հովհաննիսյանը :

Ծառայությանը հասանելի տեղեկատվական շտեմարաններում առկա տեղեկատվության վերլուծությամբ պարզվել է, որ «Մագիստրալ նախագիծ» ՍՊ ընկերությունը (ՀՎՀՀ՝ 02228296), որի իրական շահառու է հանդիսանում Միեր Բարիկյանը, 2023 թվականի հոկտեմբերի 21-ից մինչև 2025 թվականի հոկտեմբերի 21-ը ներառված է գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընկերության իրական շահառու Անժելիկա Հովհաննիսյանի և «Մագիստրալ նախագիծ» ՍՊ ընկերության միջև առկա է

փոխկապակցվածություն, մասնավորապես՝ ընկերության սեփականատեր Անժելիկա Հովհաննիսյանը հանդիսանում է նաև «Մագիստրալ նախագիծ» ՍՊ ընկերության տնօրեն: ԻՆչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 2024 թվականի փետրվարի 9-ին տրամադրված պարզաբանման համաձայն (պարզաբանումը կցվում է) :

Մասնավորապես ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի՝

- 121-րդ կետի համաձայն՝ մասնակցի «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման.

- 32-րդ կետի 1-ին մասի «բ» պարբերության համաձայն մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հավաստում՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր և իրեն փոխկապակցված անձանց համապատասխանության մասին.

- 33-րդ կետի համաձայն՝ պայմանագրով (նախագծով) սահմանվում է նաև, որ այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար:

Վերոգրյալով պայմանավորված հայտնում ենք, որ ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունը միակողմանի լուծում է 29.12.2023 թվականին կնքված «ՀՀ էկոնոմիկայի նախարարության կարիքների համար գրասենյակային հաշվողական սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների» թիվ ՀՀ-ԷՆ-ԳՀԾՁԲ-23-24/10-2 ծածկագրով պետական գնման պայմանագիրը:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի՝ Ընկերությունը կներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Հաշվի առնելով վերոգրյալը տեղեկացնում ենք ՝ Պայմանագրի մակողմանի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է 52 000 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը կազմում է 78000 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին:

Մաժամանակ տեղեկացնում ենք , եթե ընկերությունը սույն ծանուցումն ստանալուց հետո 5 (հինգ) օվա ընթացքում վճարի վերը նշված 52 000 ՀՀ դրամ՝ պայմանագրի կատարման ապահովման և 78000 ՀՀ դրամ՝ որակավորման ապահովման գումարները, ապա **«Տեխնոիժիներինգ» ՍՊ ընկերությունը** չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գաձապետական հաշվեհամարին և վճարված կտրոնների բնօրինակը ներկայացնել ՀՀ էկոնոմիկայի նախարարություն:

Հարգանքով՝

X

Ժ" Զաքարյան

(գլխավոր քարտուղարի

պարտականությունները կատարող)

Կատարող՝
Խորհրդական, Գայանե Դանիելյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ՂԵԿԱՎԱՐ

Ե/81-24
16 Փետրվարի, 2024թ.

0077, ք. Երևան, Մ. Մաշտոցի պողոտա 47

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ
ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Քերոբյան,

Ղեկավարվելով «Պետական վերահսկողական ծառայության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասով՝ ՀՀ պետական վերահսկողական ծառայությունն (այսուհետ՝ Ծառայություն) իրականացրել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության կարիքների համար 2023 թվականի դեկտեմբերի 4-ին գնումների պաշտոնական տեղեկագրում (այսուհետ՝ Տեղեկագիր) հրապարակված թիվ «ՀՀ-ԷՆ-ԳՀԾՁԲ-23-24/10» ծածկագրով «գրասենյակային հաշվողական սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների ձեռքբերման» գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) վերլուծություն, որի արդյունքում պարզվել է հետևյալը՝

2024 թվականի հունվարի 3-ին հրապարակված Տեղեկագրում կնքված պայմանագրի մասին հայտարարության համաձայն՝ Ընթացակարգի 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվել Ընթացակարգի նվազագույն գնային առաջարկ ներկայացրած «Տեխնոինժիներինգ» ՍՊ ընկերությունը (ՀՎՀՀ՝ 02290157) (այսուհետ՝ Ընկերություն) (Փ1):

Համաձայն իրավաբանական անձանց պետական ռեգիստրի պետական միասնական գրանցամատյանի Ընկերության 100% բաժնեմասի սեփականատեր է հանդիսանում Անժելիկա Հովհաննիսյանը (Փ2):

Ծառայությանը հասանելի տեղեկատվական շտեմարաններում առկա տեղեկատվության վերլուծությամբ պարզվել է, որ «Մագիստրալ նախագիծ» ՍՊ ընկերությունը (ՀՎՀՀ՝ 02228296)՝ որի իրական շահառու է հանդիսանում Միեր Բաղիկյանը, 2023 թվականի հոկտեմբերի 21-ից մինչև 2025 թվականի հոկտեմբերի 21-ը

ներառված է գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ուշագրավ է այն, որ Ընկերության իրական շահառու Անժելիկա Հովհաննիսյանի և «Մագիստրալ նախագիծ» ՍՊ ընկերության միջև առկա է փոխկապակցվածություն, մասնավորապես՝ Ընկերության սեփականատեր Անժելիկա Հովհաննիսյանը հանդիսանում է նաև «Մագիստրալ նախագիծ» ՍՊ ընկերության տնօրեն (Փ3):

Այսպես՝ «Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: ...:»

Համաձայն ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 119-րդ կետի 2-րդ ենթակետի՝ գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության իմաստով՝ ֆիզիկական և իրավաբանական անձինք համարվում են փոխկապակցված, եթե նրանք գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից կամ եթե տվյալ ֆիզիկական անձը կամ նրա ընտանիքի անդամը հանդիսանում է՝

ա. տվյալ իրավաբանական անձի բաժնետոմսերի տասը տոկոսից ավելիին տնօրինող մասնակից,

բ. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ձևով իրավաբանական անձի որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող անձ,

գ. տվյալ իրավաբանական անձի խորհրդի նախագահ, խորհրդի նախագահի տեղակալ, խորհրդի անդամ, գործադիր տնօրեն, նրա տեղակալ, գործադիր մարմնի գործառույթներ իրականացնող կոլեգիալ մարմնի նախագահ, անդամ,

դ. իրավաբանական անձի այնպիսի աշխատակից, որն աշխատում է գործադիր տնօրենի անմիջական ղեկավարության ներքո կամ իրավաբանական անձի կառավարման մարմինների կողմից որոշումների ընդունման հարցում որևէ էական ազդեցություն ունի:

(...)

Ընդ որում՝ Կարգի 121-րդ կետի համաձայն՝ մասնակցի՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու

ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.14 կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: (...)

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Պետական վերահսկողական ծառայության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետը՝ առաջարկում ենք՝ առաջնորդվելով սահմանված իրավակարգավորումներով, գնումների գործընթացը համապատասխանեցնել Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին՝ արդյունքների մասին տեղեկացնելով Ծառայությանը:

Առդիր՝ 3 (երեք) նիշք:

ՀԱՐԳԱՆՔՈՎ X _____ **ՌՈՄԱՆՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

Կատարող՝ **Գևորգ Սմբատյան**
Ստորաբաժանում՝ ***Գնումների գործընթացների վերահսկողության վարչություն***
Հեռ.՝ ***010-31-32- 34***

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ**

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Վեբ կայք՝ www.minfin.am, ֆինսախ.հայ
Էլ. փոստ՝ secretariat@minfin.am
Հեռ.՝ (+374 11) 800 011

№ 03/26-1/2668-2024

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ
ՏԻԿԻՆ ԺԱՆՆԱ ԶԱՔԱՐՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Զաքարյան

Ի պատասխան Ձեր 27/11/2023թ. թիվ 14.01/14.16/40743-2023 գրության հայտնում ենք, որ բարձրացված հարցադրման վերաբերյալ հարաբերությունները սահմանված են գնումների մասին օրենսդրությամբ:

Մասնավորապես ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի՝

- 121-րդ կետի համաձայն՝ մասնակցի «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման.

- 32-րդ կետի 1-ին մասի «բ» պարբերության համաձայն մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հավաստում՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր և իրեն փոխկապակցված անձանց համապատասխանության մասին.

- 33-րդ կետի համաձայն՝ պայմանագրով (նախագծով) սահմանվում է նաև, որ այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման

նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է ՀՀ օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է: Նշված կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում հսկողություն և (կամ) վերահսկողություն իրականացնող մարմինները, իսկ մյուս դեպքերում պատվիրատուն այդ մասին ծանուցում են իրավապահ մարմիններին՝ վերջիններիս և պայմանագիր կնքած մասնակցին ներկայացնելով հիմքերը:

Վերոգրյալի ամփոփմամբ հայտնում ենք, որ եթե մասնակցի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ներառվելուց հետո վերջինս կամ վերջինիս հետ փոխկապակցված կազմակերպությունները նշված ցուցակում ներառվելուց հետո մասնակցել են գնման ընթացակարգերի և վերջիններիս հետ կնքվել են պայմանագրեր, ապա դրանք ենթակա են միակողմանի լուծման՝ ձեռնարկելով նաև միջոցներ վերջիններիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ուղղությամբ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ 2/9/2024

X

ԱՎԱԳ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN AVAG 2003930574

ԱՎԱԳ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Կատարող՝ Գ. Մեհրաբյան
Հեռ. 011800147